

ցիչ Գրիգորը կաթողիկոս Աղթամարցւոյ բանաստեղծութիւններէ, զորոնք սիրած է, ամիտիած է ի մի, յաճախ կարդացած եւ հետեւած: Այսպէս «Ահա պայծառացաւ լոյսն արգական», տաղն նմանութիւն մ'է Աղթամարցւոյ «Յետ գնալոյ վարդին», բանաստեղծութեան, մանր համեմատութիւնքն թողով այլոց, կը մատնանշեմ հոս պարզապէս այս տուներ.

Զաքարիա .

Գրիգոր .

Տիրես ամենայն ծաղկանցըն	Ծաղկանցըն հաւասար
բոլոր,	գլուխըն դու ես,
Բազմիս ի դահոյս սրպէս	Որպէս զարգայ եւ տէր
թագաւոր,	ամենու տիրես,
Արագիս արժանիքեզ ծա-	Գուենովըզ վայելուչ հոտով
ռայ զինուոր:	անոյշ ես.
Որ ես եմ գեղեցիկ թըռ-	Յամէն առաւաւտու քան
չուն թեւաւոր:	զարեւ փայլես:

Աւելի մեծ է նմանողութիւնը Զաքարիայի «Զօրք անմարմնոց հիանալով», եւ Գրիգորի «Գովեալ սուրբ հայր ոմն յարակայ», ցայժմ անծանօթ տաղերու մէջ. Զաքարիայինը ուրիշ բառերով շրջումն է միայն Գրիգորի տաղին. օրինակի համար այս տուներ .

Զաքարիա .

Գրիգոր .

Նուաղեալ սիրտ իմ յոյժ	Սուրբ եւ մաքուր հայր
տոչորի,	պատուական
Խանդաղակաթ առ քեզ	Ազգի պարծանք եւ աննը-
լինի,	ման
Սերով կապեալ ընդ քեզ	Յոյժ փափաքիմ քո սուրբ
կապի,	տեսլեան.